ԼՈՒԻԶԱ ԱՆՏՈՆՅԱՆ

ՄԵՆԹՈՐ-ՄԵՆԹԻ (ՀՈՎԱՆԱՎՈՐՅԱԼ) ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Ես-Դու (I-Thou) հարաբերությունը

«Կար ժամանակ, երբ կրթողի և ուսուցչի գոյությունն ու առավել ևս պահանջն ընդհանրապես չէր զգացվում: Կային վարպետներ, փիլիսոփաներ կամ արհեստավորներ, որոնց վարձկաններն ու աշկերտներն իրենց հետ էին ապրում, յուրացնում ու սովորում էին նրանց ձեռքի և մտքի աշխատանքը: Բայց, ակամայից, առանց նկատելու նրանք սովորում էին անձնական կյանքի առեղծվածը. նրանք ոգի էին ստանում»:

Մարթին Բուբեր

Մենթոր-մենթի (հուն. Mentor) բինոմի արմատները գնում են դեպի հին հունական դիցաբանություն: Մենթորը Հոմերոսյան պոեմում Ոդիսևսի որդի Տելեմաքոսի խնամակալ-դաստիարակն էր: Այս առումով մենթորային հարաբերությունները, որոնք ենթադրում են ավելի փորձառու անհատի (մենթորի) աջակցությունը քիչ փորձառուին (մենթիին կամ հովանավորյալին (protege), երկար ժամանակ եղել են կրթության բաղկացուցիչ մի մաս՝ չնայած տեսականորեն սահմանված չեն եղել, սակայն գոյություն են ունցել որպես երևույթ:

Դժվար է միանշանակ սահմանել մենթորության էությունը, քանի որ այն շատ դինամիկ է և նրա գործառույթն օրեցօր հարստանում է նորանոր բնագավառներով (կրթություն, բիզնես, արվեստ, դատական համակարգ, առողջապահություն, և այլն): Քանի դեռ կոնկրետ և միանշանակ սահմանում գոյություն չունի, մենթորությունը կարելի է բնութագրել որպես միջանձնային հարաբերության ձևերից մեկը:

Եվ ահա. «Ի սկզբանէ հարաբերությունն է»[1]: Այս աստվածաշնչյան արձագանքը իր յուրովի ձևակերպումն է ստացել Բուբերյան ընկալմամբ, որտեղ ընդգրկված են «հարաբերության» բազմաթիվ տարբերակները՝ մարդ-մարդ, մարդ-Աստված, մարդ-աշխարհ: Փիլիսոփայության երկխոսական (dialogic) դպրոցի (որում առաջնային տեղը զբաղեցնում է երկխոսությունը մարդու և աշխարհի միջև) ներկայացուցիչ Մարթին Բուբերի աշխատությունը ընդգրկում է հոլիստիք մենթորության երևույթը, որին էլ անդրադաձել ենք մենք այս հակիրճ ուսումնասիրության մեջ:

[1] Buber, M. (1958). I and thou (2nd ed.). (R. G. Smith, Trans.). New York: Charles Scribner's Sons. (Original work published 1923), p. 8.

Բուբերի պնդմամբ գոյություն ունի երկու հիմնական հարաբերություն. *Ես-Դու (I-Thou)* և *Ես-Այն (I-It)*: Նա էքզիստենցյալ փիլիսոփա Կիեռկեգոռով ոգեշնչված՝ տարբերակում է սուբյեկտ-օբյեկտ հարաբերությունը *(Ես-Այն)*, որտեղ ներգրավված անձինք մեկը մյուսի համար մնում են որպես մեկուսացված սուբյեկտներ և զուտ օբյեկտներ: Նա նաև տարբերակում է անձ-անձ (*Ես-Դու)* շփումը, որտեղ յուրաքանչյուր անհատ մյուսի հետ անկեղծ հարաբերության մեջ է մտնում[2]:

Ըստ Բուբերի «*Ես և Դու*» հարաբերությունը հուզական շփման միջոցով թերապիա ակնկալող հանդիպում (encounter) է, որում բացակայում են սեփականատիրական և մանիպուլյացիայի մոտեցումները[3]: Այս հարաբերության մեջ ոչ մի հետին միտք չի հետապնդվում և դրանում յուրաքանչյուր մարդ անկեղծ է, վստահելի և ինքնաբացահայտող:

Ի՞նչ է կատարվում: Իրականում, քայլ առ քայլ, մենթորն ու մենթին միջանձնային մի դաշինք են կնքում, որտեղ կարող են ի հայտ գալ «*Ես-Դու*» կապերը: Հետևաբար, անձի զարգացումը դառնում է նաև «*Ես-Դու*» հարաբերության արդյունք, որտեղ ճշմարիտ հուզական շփումը մարդու հոգեկան և մասնագիտական զարգացման համար հույժ կարևոր է:

Բուբերը պնդում է, որ կրթության մեջ հարաբերությունն սկսվում է անեղծ երկխոսություններից: Այդ երկխոսության մեջ, մտովի, թե բարձրաձայն, «յուրաքանչյուր մասնակից հաշվի է առնում ներկա գտնվող կամ կոնկրետ ինչ-որ մեկին, կամ մի քանիսին և դիմում է նրանց իրենց մեջ կենդանի, փոխադարձ հարաբերություն հաստատելու մտադրությամբ»[4]: «Դիալոգիկ» վիճակը մի կողմից կարելի է կոչել ներփակ, քանի որ ուսուցչին հնարավորություն է տրվում ընդունել դիմացինին և ճանաչել նրան որպես անհատականություն:

Այս երկու հարաբերությունների ձևերից առավել բնորոշը *Ես-Այն (I-It)* հարաբերությունն է, որը, մեր կարծիքով, *Ես-Դու* հարաբերության համեմատությամբ պրիմիտիվ (պարզունակ) հարաբերության ձևերից է: Այստեղ մարդիկ վերաբերվում են մյուսներին որպես օբյեկտ, այսինքն՝ «*այն*» և գործի են դնում տարբեր խորամանկություններ և վարպետություն (մանիպուլացիա)՝ շահագործելու միմյանց իրենց իսկ նպատակների համար: «Ուրիշներին դիտելով որպես օբյեկտ՝ մենք (*Ես*-ը) մեզ ներկայացնում ենք որոշակի կերպ նպատակ ունենալով ուրիշներին ստիպել պատասխանել մեզ այնպես, ինչպես

---

[2] Հմմտ.՝ Buber, M. (1958). I and thou (2nd ed.). (R. G. Smith, Trans.). New York: Charles Scribner's Sons. (Original work published 1923), Buber, M. (1965a). Between man and man (R.G. Smith, Trans.) New York: Macmillian. p. 37.

[3] Buber, M. (1965a). Between man and man (R.G. Smith, Trans.) New York: Macmillian. p. 19.

[4] Նույն տեղում:

մենք ենք ուզում»[5]: Հետևաբար, սուբյեկտ-օբյեկտ հարաբերությանը բնորոշ է անջատումը, բաժանումը. «*Ես-Այն*» գաղափարը օբյեկտի, այսինքն *Այն* –ի, նկատմամբ ունեցած օբյեկտիվ գիտելիքն է, ինչպես անձից դուրս գտնվող ցանկացած բան: Քանի որ տեղյակ անձն առանձնացված է և օբյեկտի հետ ոչ մի էական առնչություն չունի, այդ երկուսի մեջ հաղորդակցությունը բացակայում է:

Մյուս կողմից, հարաբերության «*Ես-Դու*» տեսակն ավելի հազվադեպ և զորեղ է և այստեղ մենք հրաժարվում ենք անձին օբյեկտ դարձնելու ցանկությունից, հավակնությունից և մանիպուլյացիայից -և նրա հետ մտնում ենք անկեղծ հարաբերության մեջ. «Յուրաքանչյուրս ինքներս մեզ առաջարկում ենք այնպես, ինչպես որ կանք, և փնտրում ու ընդունում մյուսին այնպես, ինչպես որ նա կա: Մենք սա անում ենք ոչ թե նրա համար, որ դիմացինն օգտակար լինի մեզ, այլ նրան հասկանալու և նրա կողմից հասկացված լինելու համար»[6]: Ավելի հստակ՝ այս հարաբերություններում լիովին բացակայում է շահադիտական նպատակը: «Երբ այս ամենը տեղի է ունենում, մեր միջև կատարվածն արդեն հաստատում է մեր գոյությունը, մեր արժեքը և որ ամենակարևորն է մեր ներուժը: Մենք երկուսս էլ զորեղանում ենք: Սակայն, մեզնից ոչ ոք, միայնակ չի ցանկանում ընթանալ: Շփումը պետք է փոխադարձ լինի»[7]:

«*Ես-Դու*» հարաբերության մեջ, դիմացինը դադարում է «*Այն*» լինելուց և դառնում է «*Դու*»: Հարաբերությունը փոխադարձ է, առանց սեփականատիրության ավտորիտար միտումի, որտեղ յուրաքանչյուր ոք վստահելի է և ինքնաբացահայտող. «Նա բացահայտումներ է կատարում ոչ թե հենց իր մասին, այլ իր սեփական անձի («*Ես*»-ի) և փոխարենը մենք էլ ենք նույնն անում: «*Ես-Դու*» հարաբերությունը փոխարինել է օբյեկտիվ հարաբերությանը, որտեղ մենք կարծես երկու իր լինեինք դեմ առ դեմ կանգնած: Այժմ կա փոխհաղորդակցություն: Երկուսն էլ ավելի շատ են տեղեկացված, և ինչ-որ մեկը դիտորդ չէ: Ավելին, «*Նա*»-ն արմատապես վերափոխված է, որովհետև գիտե և գիտակցորեն տրվում է ուրիշին:

Երբ երկու անձի միջև նման էքզիստենցյալ (գոյաբանական) զգացմունքային շփում է տեղի ունենում, նշանակում է փոխհաղորդակցությունն ի կատար է ածվել: «Դիմացինն իմ աչքերում դառնում է ինչ-որ առեղծվածային և գրեթե անբացատրելի ձևով հատուկ էակ, իմ աշխարհի, իմ էության մի

---

[5] Gehrke, N. J. (1988). On preserving the essence of mentoring as one form of teacher leadership. Journal of Teacher Education, 39 (1), 43-45. էջ 44.

[6] Gehrke, N. J. (1988). On preserving the essence of mentoring as one form of teacher leadership. Journal of Teacher Education, 39 (1), 43-45. էջ 44.

[7] Gehrke, N. J. (1988). On preserving the essence of mentoring as one form of teacher leadership. Journal of Teacher Education, 39 (1), 43-45. p. 44.

մասնիկը: Հնարավորինս մտնում եմ դիմացինի աշխարհի մեջ, իսկ նա ոտք է դնում իմ աշխարհ: Ու թեև ինչ-որ միածուլում լինում է, մեզանից յուրաքանչյուրը միշտ մնում է որպես անհատականություն»[8]:

«*Ես-Դու» (I-Thou)* հարաբերությունը կրթության մեջ

Բարձրագույն կրթության մեջ չափահասների մենթորը ներգրավված է ուսուցիչ-աշակերտ այսպես կոչված «դեմ առ դեմ» հարաբերություն մեջ, որտեղ երկու անհատների եզակիությունը, որպես մարդկային էակների, գնահատվում է որպես կրթական գործընթացի մի մաս[9]: Դ. Մաքդոնալդը համամիտ է այն մտքի հետ, որ ուսուցանել-սովորել ընթացքը առնչվում է հարաբերակցության և շփման հետ, որը կարող է որոշիչ դառնալ անձի անհատական զարգացման հետագա ուղղվածության համար: Այս հարաբերության վերաբերյալ նրա մեկնաբանությունը համապատասխանում է Բուբերի «*Ես-Դու»* շփման հետ. «Աշակերտի զարգացումը խթանելու համար ... ուսուցիչը պետք է ընդառաջ գնա նրան, այլ ոչ թե նրա հետ վարվի՝ որպես վերադասը-ենթակայի: ... Երբ ուսուցիչը վեր է դասում իր կարգավիճակը, աշակերտները չեն բացահայտում իրենց և, հետևաբար, նրանց աճի պոտենցիալը սահմանափակվում է, քանի որ նրա առջև փակվում են զարգացման բոլոր դռները: Իսկական ուսուցիչը բարյացակամ հարաբերությունների միջոցով հնարավորություն է ընձեռում աշակերտին ուղղակի, անմիջնորդ կապ հաստատել իրականության հետ: Այլ կերպ դրսևորվելու դեպքում՝ ուսուցիչը պատնեշում է ուսանողի զարգացման ուղին»[10]:

Անշուշտ, մենթոր-ուսուցչի համար կրթության նպատակը լիարժեք անձ ձևավորելն է: Ուստի մենթորը ներգրավված է չափազանց լուրջ հոգատարության, ինչպես նաև դասավանդման հմտությունների կիրառման և գիտելիքների փոխանցման մեջ:

Հենց այս ուսուցիչ-ուսանող համագործակցությունն է, որ որոշում է կրթության արժեքը: Համագործակցության էությանն էլ հենց մենթորի արվեստն է:

---

[8] Powel, H. J. et al. (1995) Adjusting the focus: Teachers' roles and responsibilities in school/university collaboration. *The Teacher Educator*. pp. 1-41.

[9] Հմմտ.՝ Daloz, L. (1986). *Effective teaching and Mentoring*. San Francisco, CA: Jossey-Bass./ DeCoster, D. A., & Brown, R. D. (1982). Mentoring relationships and the educational process. In R. Brown & D. DeCoster (Eds.), New directions for student services Mentoring-transcript systems for promoting student growth (pp. 5-17). San Francisco: Jossy-Bass. / Lester, V., & Johnson, C. (1981). The learning dialogue. In J. Fried (Ed.), *Education for student development* (pp. 49-56). New Directions for Student Services, no. 15. San Fran-cisco: Jossey-Bass.

[10] Mcdonald, D.L. (1985). Educational psychology: The teaching-learning process. Chicago: Moody. p. 31.

Կրթության այդօրինակ լայն հասկացությունը ենթադրում է, որ կրթված լինել նշանակում է «հումանիզացվել», ոչ թե պարզապես վարժեցվել: Բազմիցս նշվել է, որ կրթությունը ուսանողի հետ մեր ունեցած հարաբերության մի դրսևորումն է: Սա համընկնում է Բուբերի այն գաղափարի հետ, որ իսկական ուսուցիչը նա չէ, ով տեղեկատվությունը լցնում է ուսանողի մեջ այնպես, ինչպես կլցնեին խողովակի մեջ, և ոչ էլ նա, ով համարում է, որ բոլոր պոտենցիալներն արդեն գոյություն ունեն ուսանողի գլխում և անհրաժեշտ է միայն դրանք զարգացնել: Իսկական ուսուցիչը նա է, ով խթանում է անկեղծ փոխադարձ կապն ու վստահությունը, նա, ով զգում է դիմացինին և աշխարհը ճշմարիտ ճանաչելու միջոցով օգնում է իր աշակերտին գիտակցել, թե ինչ ասել է մարդ (ես) լինել[11]: Այստեղ կրկին հարաբերությունն ամենակարևորն է: Բուբերը նաև հաստատում է, որ մարդը այդպիսին (այսինքն՝ *ես*) դառնում է միայն մյուս *ես*-ի հետ շփման միջոցով: Բացի այդ, մարդը դառնում է ավելի ամբողջական մարդկային էակ, երբ մեկուսացումից անցնում է ավելի հասուն *ես-Դու* հարաբերության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Buber, M. (1958). I and thou (2nd ed.). (R. G. Smith, Trans.). New York: Charles Scribner's Sons. (Original work published 1923).
2. Buber, M. (1965a). Between man and man (R.G. Smith, Trans.) New York: MacMillian.
3. Daloz, L. (1986). *Effective teaching and Mentoring*. San Francisco, CA: Jossey-Bass.
4. DeCoster, D. A., & Brown, R. D. (1982). Mentoring relationships and the educational process. In R. Brown & D. DeCoster (Eds.), New directions for student services: Mentoring-transcript systems for promoting student growth (pp. 5-17). San Francisco: Jossy-Bass. p. 8.
5. Gehrke, N. J. (1988). On preserving the essence of mentoring as one form of teacher leadership. Journal of Teacher Education. 39 (1), 43-45.
6. Lester, V., & Johnson, C. (1981). The learning dialogue. In J. Fried (Ed.), *Education for student development* (pp. 49-56). New Directions for Student Services, no. 15. San Fran-cisco: Jossey-Bass.
7. Mcdonald, D.L. (1985). Educational psychology: The teaching-learning process. Chicago: Moody.
8. Powel, H. J. et al. (1995) Adjusting the focus: Teachers' roles and responsibilities in school/university collaboration. *The Teacher Educator*. pp. 1-41.

[11] Հմմտ.՝ Buber, M. (1965a). Between man and man (R.G. Smith, Trans.) New York: Macmillian. p. 12.